

368
Ա-57

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ

ՀՐԱՀԱՆԳ

ԳԱՆՁՈՂՆԵՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՎԱՅՐԵՐՈՒՄ
ՊԱՐՏԱԴԻՐ ԿՈՊԱՐԱՅԻՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ
ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԳԱՆՁՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1929—30 թ.



ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԳԵՏԱԳԻ

№ 1



ՀՐԱՀԱՆԳ

ԳԱՆՁՈՂՆԵՐԻ, ԳՅՈՒՂԱԿԱՆ ՎԱՅՐԵՐՈՒՄ
ՊԱՐՏԱԴԻՐ ԿՈՊԱՐԱՅԻՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ
ԱՊԱՀՈՎԱԳԻՆ ԳԱՆՁԵԼՈՒ ՄԱՍԻՆ

§ 1.

Բնակչությունից կապարային ապահովագրների և անցյալ տարիների հետևությունների գանձումների համար, գանձողը ստանում է Պետապի գործակալից ապահովագրական ծանուցագրեր, ցուցակներ, անդորրագրերի գրքայիններ, գանձում կատարելու իրավունքի վկայական ու գանձման կարգի մասին հրահանգ. այդ բոլորի ստացման մասին նա տալիս և գործակալին համապատասխան բացական:

§ 2.

Ծանուցագրերում և ցուցակներում գրված են լինում ապահովագրները և ցույց և տրվում թե նրանցից յուրաքանչյուրը փորքան պետք է վճարի խոշոր յեղջյուրափոր անասունների, ուղղերի, ալմանակների և ձիերի ապահովագրության համար ապահովագրին. նույնպես և թե փորքան հետևություն և մնում նրա վրա:

§ 3.

Յեթե գանձողը կհայտնաբերի ծանուցագրերում փորքե սխալ, պարտափոր և այլ մասին հայտնելու Պետապի գործակալին, առանց փորքե ուղղումներ կատարելու ծանուցագրում կամ ցուցակում:

§ 4.

Գանձողն ապահովագրից ընդունում է նաև ապահովագրին ըստ լրացուցից ապահովագրության այն դեպքում, յեթե նա լիազորված և այլ կատարելու:

§ 5.

Գանձողը գործակալից ապահովագրական ծանուցագրերն ստանալուց հետո, գլուղական ժողովում

բնակչությունը հայտնում է յիոր ինքը նշանակված և գանձող, փոր բնակչությունը պարտափոր և վճարելու իր ապահովագրինը սահմանված ժամկետում, հակառակ դեպքում ստիպված կլինեն վճարելու նաև տույժ յուրաքանչյուր ժամկետանց յերկու շաբաթվա համար 3 տոկոսի չափով, կամ ամիսը 6 տոկոս, մեկ ուրույց 6 կոպ.— թե ինչքան և ինչի համար պետք է վճարել, ցույց և տրվում լինում ծանուցագրում: Ծանուցագրերը հենց նույն ժողովում ներկա գտնվողներին բաժանում է գանձողը. իսկ բացակայների ծանուցագրերը հանձնում է տեղերին իրենց տանը:

§ 6.

Բացի այդ, հենց նույն ժողովում գանձողը հայտնում է բնակչության, փոր նրանք կարող են իրենց ջենքերը, անասունը և բուսական մշակություններն ապահովագրել լրացուցիչ կարգով. իսկ թե փորքան պետք է վճարել, դրա համար պետք է իմանալ գործակալից և նրա մոտ ել ապահովագրվել:

§ 7.

Բնակչությունը հայտարարելուց և ծանուցագրերը բաժանելուց հետո, գանձողը սկսում է գանձել ապահովագրինը:

§ 8.

Գանձողը կարող է բնդունել ի հաշիվ ապահովագրի գրքից բացի, նաև պետական գլուղական փոխառություն խաղարկության տոմսեր, փորոնց մասին վարչությունը հատուկ գրություն հայտնում է գործակալին:

§ 9.

Գանձողը պարտափոր է բնդունել բնակչությունից ղիմումներ նոր գնած կամ ծախած անասունների մասին կամ ցուցակներում սխալմամբ բաց թողնված գույքի մասին և հանձնել գործակալին:

§ 10.

Ամեն անգամ ամեն մի ստացած ապահովագրական

վճարի համար գանձողը պետք է տա գործակալից ստացած անդորրագրերի գրքույկից ապահովագրական անդորրագրեր № 3 ձևից: Արգելվում է տալ վերև այլ անդորրագրեր, կամ վորևե ուրիշ գրքույկից կամ ժամանակավոր ստորագրություններ:

§ 11.

Նույնպես արգելվում է անդորրագրեր տալ մի ուրիշ անդորրագրի գրքույկից, յեթե դեռ ձևերի գրքույկն սպառված չէ. կամ արվում է անդորրագրի խախտելով համարների հերթականությունը:

§ 12.

Ամեն մի անդորագրի վրա, համարից բացի, պետք է լինի գործակալության կնիքը. առանց կնիքի անդորագրերը վավերական չեն:

§ 13.

Անդորրագրում գանձողը պարտավոր է գրելու, թե վորքան է ստացել այդ անդորրագրով ապահովագրին, հիշելով առանձին հետևություն, կուպար և տույժ վորքան է ընդամենն ստացած. ընդհանուր գումարով ցույց տալ այդ բոլորն արգելվում է:

§ 14.

Յեթե ապահովագրերը վճարում է ավելի պակաս քան նրա վրա յեղած հետևություն ու կուպարը, անդորրագրում գրվում է հետևություն լրիվ գումարը: Իսկ մնացած գումարը հաշվվում է ի հաշիվ կուպարի, այսինքն՝ առաջի հերթի պետք է գանձել հետևությունը:

§ 15.

Անդորրագրերը լրացնելու համար գանձողը տեղեկություններ վերցնում է ծանուցագրից կամ ցուցակից: Ծանուցագրերի գրքույկով գանձողը պետք է գտնի վճարողի ազգանունը և նախ լրացնի անդորրագրի արմատը, ապա կտրոնը: Գրելուց հետո գանձողը պետք է ստուգի՝ թե արդյոք ճիշտ է վերցրել ծանուցագրերից համապատասխան տեղեկությունները

կուպարի և հետևությունի գումարների մասին: Հետո գանձողն ստանում է գրամը և ապա տալիս է անդորրագրերը, ստացված գումարը գրվում է տասերով:

§ 16.

Անդորրագրում, ինչպես և արմատում պետք է գրվեն գրամն ստանալու ժամանակը (ամիսը, թիվը) և ծանուցագրի համարը: Վոր որը գրամն ստանում է, նույն թիվն էլ պետք է գնի անդորրագրի վրա, ուրիշ թիվ դնել խիստ արգելվում է:

§ 17.

Անդորրագրերը պետք է բացառապես գրվի միայն թանաքով. կամ քիմիական մատիտով:

§ 18.

Միաժամանակ գանձողը գրում է ապահովագրական ծանուցագրերի ցուցակում կամ գրքույկում՝ թե յերբ է ստացել ապահովագրական վճարումները և ինչ համարով է անդորրագրեր տվել:

§ 19.

Անդորրագրերը տալուց և ծանուցագրում նշելուց հետո արգելվում է արմատում վորևե ուղղում կատարել կամ լրացուցիչ գանձումներ անել:

§ 20.

Յեթե ապահովագրերը մուծում է իր ապահովագրինը վոչ թե լիովին, այլ մաս-մաս, գանձողը պարտավոր է յուրաքանչյուր մուծված գումարի համար տալ առանձին անդորրագիր և այդ գումարը նշանակել նրա ծանուցագրում և ցուցակում:

§ 21.

Ապահովագրական անդորրագրերը գրվում է այն անձնավորության անվամբ, վորից պետք է գանձել ապահովագրին ըստ կուպարային ցուցակի և վոչ թե նրա անվամբ, վորն անմիջապես մուծում է. որինակ՝ նրա կինը, վորդին կամ հարևանը:

§ 22.

Լրացված անդորրագրերի արմատները գանձողը

մինչև գործակալին հանձնելը, պարտավոր է պահել իր մոտ:

§ 23.

Յուրաքանչյուր շատ կարևոր փաստաթուղթ և համար-վում, ուստի դանձուղը պետք է պահել իր մոտ, վեր-յեքեա, թե դանձուղն ամեն ժամանակ գրանցումներ կատարել և և լավ և պահպանել:

§ 24.

Գանձած ապահովագրական վճարումները դանձո-ղը պետք է հանձնի գործակալին կամ նրա օգնակա-նին, վոչ ոչ քան շարաթի մեկ անգամ:

§ 25.

Դրամը դանձուղը հանձնում է գործակալին գոր-ծակալության գրասենյակում կամ պայմանավորված վայրում: Երկուսի, գյուղխորհուրդներում, չըլգործ-կումում և այլն: Յեթե դանձուղն անձնապես չի ձանա-չում գործակալին կամ նրա օգնականին, պետք է նրանցից պահանջի ներկայացնել համապատասխան փաստաթուղթ և հետո միայն դրամը հանձնի նրան:

§ 26.

Վորոչ վայրերի դանձուղներ իրենց դանձած գու-մարները կարող են փոխադրել գործակալին՝ փոստով Այդ գեղքում փոխադրության ծախքը կատարվում է Պետալի հաշվին:

§ 27.

Մինչև գործակալին հանձնելը, դանձուղը դանձած գումարները պետք է պահի տանձին այլ գումարնե-րից: Գանձված ապահովագրական գումարները ծախ-սել վոչ մի գեղքում թույլ չի տրվում:

§ 28.

Գանձուղը գործակալին դրամը հանձնելու ժամա-նակ պետք է ներկայացնի նրան՝

ա) ցուցակը:

բ) անդորրագրերի գրքույկը:

գ) բնակչության մուծած գումարները:

§ 29.

Գործակալը բոլոր ստուգումները կատարելուց հետո բնորոշում է դանձուղից դանձած դրամը և տա-լիս է նրան ստացման սահմանված անդորրագիր (ձև № 4): արգելվում է տալ մասնավոր ստացական: Ան-դորրագրում նշված գումարի ճշտությունը դանձուղը պարտավոր է ստուգել հենց այնտեղ:

§ 30.

Գանձուղը գործակալից ստացած անդորրագրերը պետք է պահի իր մոտ և պահանջված գեղքում ներ-կայացնի Պետալի տեսուչներին կամ ստուգում կա-տարելու իրավունք ունեցողներին:

§ 31.

Կոպարային վճարումների դանձումների համար դանձուղն ստանում է տոկոսային վարձատրություն:

§ 32.

Գանձուղին կոպարային վճարումների դանձումնե-րի համար հասանելիք տոկոսների հաշվարկը գործա-կալը կատարում է անդորրագրերի արժաններով ստա-ցած գումարներն ստուգելուց հետո: Գործակալը վճա-րում է դանձուղին հասանելիք տոկոսային վարձատրու-թյունը և փերցնում նրանից ստացման ստորագրու-թյուն, ձև № 4 անդորրագրում:

§ 33.

Կոպարային վճարումների կամավոր մուծման ժամկետն անցնելուց հետո, վոչ ոչ քան մի շարաթ, դանձուղը պետք է հանձնի գործակալին բոլոր դան-ձած գումարները, անդորրագրերույկները, և ցուցակ-ները:

§ 34.

Դրամը գործակալին հանձնելուց և անդորրագրե-րի գրքույկում նշելուց հետո, դանձուղը հետ և ստա-նում գրքույկը, ինչպես և ցուցակը դանձումները շա-րունակելու համար:

§ 34.

Այդ որվանից դանձողն սկսում է գանձել վոչ թե այն գումարը միայն, վոր դրված է կողարային ցուցակում, այլ բարդելով վրան նաև տույժը. այն հաշվով, ինչպես ստված է սույնի § 5-ում:

§ 36.

Վճարողներին արված անդորրագրերում դանձողը գրում է դանձած գումարը հեռեյակ ձևով:

Հեռեյակթ Ռ. Կ.

Կողար Ռ. Կ.

Տույժ Ռ. Կ.

Ճիշտ նույն ձևով ել պետք է գրել անդորրագրերի արձատում: Թե անդորրագրում է թե արձատում ընդհանուր գումարով գրելն արգելվում է:

§ 37.

Գանձողը պատասխանատու չէ, համաձայն դոյու-թյուն ունեցող վորոշումների, դանձած գրամներն իր ժամանակին հանձնելու համար:


§ 38.

Ապահովագրական դանձումների ժամանակ գանձողին փոխելիս պետք է նրանից հետ ստանալ գանձում կատարելու իրավունքի վկայականը, և անդորրագրերի գրքույկները: Յուշակների և անդորրագրերի գրքույկները, ստուգումից հետո, հանձնվում է նոր գանձողին կազմելով այդ մասին համապատասխան արձանագրություն:

Անդրադատակի Հայաստանի լիադոր՝ ՄԱՆՈՒԶԱՐՅԱՆ

<< Ազգային գրադարան

Խին-Բաթնի վարիչ՝ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ



NL0213788

ԱՅՊՈԼԻԳՐԱՅԻ ՏՈՒՐԱՆ

ՊԱՏ. № 4195

ԳՐԱՌԵՊԳԼԵՎԱՐ 2288

(Բ) Ա ՏԻՐԱԶՆԱՅՈՒ

